

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեղումով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի.
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թամարիայի տանը).

Կայսրութեան ուրիշ քաղաքներին «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն.
Նամակ Առաւելայից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Որտեղից ինքնախոստովա-
նութիւն. Միացեալ-Նահանգների հարստութիւնը.
Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.— ԽԱՌԻՆ
ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՈՍԱ.— ՏԵՂԵԿԱ-
ՑՈՅՑ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Полезныя ископаемыя и минеральныя воды
Кавказскаго края. В. Мёллеръ. Тифлисъ, 1889
г.

Сборникъ статистическихъ свѣдѣній о горно-
заводской промышленности Россіи въ 1887 году.
С. Кулибинъ. С.М.В. 1890 г.

Ռուս լեռնային գրականութիւնը հարստացաւ
վերոյիշեալ վերնագրերը կրող աշխատութիւննե-
րով. Կովկասի օգտակար հանքերի և հանքային
ջրերի մասին:

Նախ մենք կամենում են առանձին առանձին
խօսել այդ գրքերի մասին:

Վերջին ժամանակներում, երբ օրից օր ստոր-
երկրեայ հարստութիւնների օգտակար պահան-
ջը աճում է, Կովկասեան լեռնային վարչու-
թիւնը ձեռնարկել է մի շարք հետազոտութիւն-
ներ, որոնց նպատակն է քննել Կովկասը իր
հանքային հարստութեան կողմից:

Գեօլոգիական գրականութեան մէջ յայտնի պ.

Մեյսլեր, վարելով Կովկասի լեռնային կառա-
վարչի պաշտօնը, ուսումնասիրել է Կովկասի
գեօլոգիական կազմակերպութիւնը, ինչպէս ինքն առա-
ջարանում բացատրում է, նա հրատարակում է
այս գիրքը այն նպատակով, որ դանազան շարա-
դրութիւնների մէջ ցրված հանքերի, հանքային
ջրերի և ցեխերի մասին տեղեկութիւնները հա-
ւաքէ մէկ գրքի մէջ և դրանով հնչեցնեն այդ
առարկաների հետ ծանօթանալ կամեցողների
գործը: Եւ յիշատի, այդ երկու նպատակներին էլ
հեղինակը հասել է մեծ անշուքով: Գիրքը
պարունակում է մշակված տեղեկութիւններ Կով-
կասի բոլոր այն հանքերի վերաբերութեամբ, որ-
ոնց արտադրութիւնները փոքր թէ շատ յայտն-
ված և ընկած են Արեւիկ գիրքը բաժանվում է
նոյնքան գլուխների, որքան Կովկասի ընդերքը
ներկայացնում է հանքերի տեսակներ. իսկ գլուխ-
ների մէջ հանքային ծննդատեղիները դասաւոր-
ված են նահանգների և գաւառների կարգով:

Հանքային ծննդատեղիները նկարագրելիս, հե-
ղինակը բացատրում է և նրանց գեօլոգիական
էական կողմերը, շերտերի տարածութիւնը, հան-
քի ենթադրելի քանակութիւնը, աղբիւրների և
բժշկարար ցեխերի քիմիական վերլուծութիւնը:
Թէպէտ գիրքը, համաձայն իր ընդհանուր նա-

խագծին՝ գիտնական կատարողի նշանակութեան,
զօրակ է ընդհանուր ենթադրութիւններից, բայց
տեղ տեղ հեղինակը տալիս է կարճատեւ երա-
կացութիւններ, որոնք այնու ամենայնիւ, մեր
կարծիքով, շատ քիչ լոյս են թափում Կովկասի
հանքերի նշանակութեան և նրանց ապագայի
վրա: Այնպէս որ գիտնական հեղինակը թող-
նում է կարգաւորելի դատել այդ խնդիրների
մասին:

Սակայն գրքի զրական կողմը՝ Կովկասի ստորեր-
կրիայ առասպելական դանձերի մասին, թող-
նում է հետեւեալ տպաւորութիւնը:

Ուսին, այս հազագին մասուլ, գտնվում է
Կովկասի լեռների 2 կողմը 36 զանազան ծննդա-
տեղիներում Արեւիկ առանձին և արձնի հետ
խառն ունի աւելի մեծ տարածութիւն: Աւելի
ստեղծ և առաւել մեծ քանակութեամբ տա-
րածվում են պղնձի, ցինկի, թլաքարի և եր-
կաթի հանքերը: Կան նոյնպէս մոլիբդենի, վիս-
մուտի, ծարաքարի, կօբալտի, միւնդելի ծննդա-
տեղիներ: Մեծ տարածութիւն ունեն քարածուխը,
տորֆը, գլաուբերիտը, աղը, մարմարիտը և շինու-
թեան քարերը: Բայց ամենանշանաւոր դիրք ունի
հանքային հարստութիւնների մէջ նաւթը, որի ար-
դիւնաբերութիւնը յայտնի է այժմ Տամանի և հըռ-
չակաւոր Ապշերոնեան թերակղզիների վրա, Կու-
բանի, Տերեքի, Բազուի, Թիֆլիսի, Գուլիստի,
Կաղաւթանի, Գանձակի և Երևանի նահանգնե-
րում: Աղը կազմում է Կովկասի նշանաւոր հա-
րստութիւններից մէկը զլլաւարապէս իր քարա-
յին մեծ շերտերով (կաղղիւնի, Կողբի, Նախի-
ջանի և Օլտիի), աղի լճերով և աղի հանքային
աղբիւրներով:

Գրքի ամենամեծ մասը նուիրած է հանքային
ջրերի նկարագրութեան: Հեղինակը համարում է
267 հանքային աղբիւրներ, որոնց թւում կան
15 զանազան քիմիական բաղադրութիւն ունե-
ցող տեսակներ, որոնց ջրմուկիւնը տատան-
վում է հետեւեալ սահմանների մէջ. ամենաբարձր
ջրմուկիւն 720⁰, Բէօմլիի նկատմամբ է Բըա-
զունեան ծծմբային աղբիւրի մէջ, ամենացած
1⁰, 75 Բէօմ. Ստիլիսի կողմից աղբիւրի մէջ: Ա-
մենաբարձր դիրք ունի Կաղղիւնի տաք (23⁰) աղ-
բիւրը, որը գտնվում է 12,000 ֆուտ ծ. մ. վ.:

Այս բոլորը միայն թէօրեաբար ցոյց է տալիս
Կովկասի հանքային հարստութիւնները: Այժմ
տեսնենք, ինչ տեղեկութիւններ է տալիս պ. Կու-
լիբինի գիրքը, որը տանելու է մեզ լեռնագոր-
ծարանական արդիւնաբերութեան իրական աչ-
խարհը:

Դեռ անցեալ տարի («Մշակ» 30 համ.) ա-
ւելի ունեցանք խօսելու պ. Կուլիբինի լեռնա-
գործարանական արդիւնաբերութեան 1886 թը-
ւականի ստատիստիկական տեղեկութիւնների մա-
սին: Այս օրերում երիտասարդ հեղինակը հա-
տարակցի մի և նոյն պրոգրամայով կազմած տե-
ղեկութիւնները, միայն 1887 թականին վերաբե-
րեալ: Ուսենալով անցեալ տարվայ հրատարակու-

թեան բոլոր արժանաւորութիւնները այժմանը
ունի և մի քանի նոր մշակած հարցեր: Անցեալ
տարի մենք պարագիցեանք այն հարցով, արդեօք
ինչ չափով մեր Կովկասը մասնակցում է պե-
տութեան ընդհանուր արդիւնաբերութեան մէջ:
Այս անգամ մեր ուշադրութիւնը դրաւում է
այն հարցը, թէ ինչ առաջադիմութիւն է անում
Կովկասի լեռնային գործը: Պ. Կուլիբինի տեղե-
կութիւններից երևում է, որ Կովկասի սահման-
ներում գտնված մէտաղներից չենաւ չեն մը-
շակվում ոսկի, ցինկ, երկաթ, մոլիբդեն, վիս-
մուտ, ծարր, միւնդել, որ վերջին չորս մետաղ-
ները Ռուսաստանի ոչ մի տեղում չեն հայթայթ-
վում, ուստի և ինչեալ մէտաղների պահանջը պե-
տութիւնը լրացնում է արտասահմանի ապրանք-
ներով:

Արեւիկ Կովկասում բովադրութիւն է միայն Ա-
լաւիի գործարանում. վերջին տարւոյ տարվայ ըն-
թացքում նրա տարեկան արդիւնքը քանակու-
թիւնը չէ ենթարկվում նշանաւոր փոփոխութեան,
տատանվելով 281/2—36 պուդի մէջ, նա կազ-
մում է պետութեան ընդհանուր քանակութեան
3,50/0, 1887 թի համար: Նոյն դրութեան մէջ
գտնվում է արձնի, որը արծաթի հետ է հայ-
թայթվում և կազմում է պետութեան ընդհանուր
արդիւնաբերութեան 150/0:

Պղնձի գործը բաւական խոշոր քայլեր է ա-
նում. Տարեկան 43,757 պուդից 1878 թ., առա-
ջադիմաբար աճելով, նա հասել է 112,855 պ.
1887 թ., կազմելով սկզբում այդ ընդհանուր ար-
դիւնաբերութեան 200/0, իսկ վերջը—մօտ 400/0:

Կօբալտի գործը, կենտրոնանալով միայն Գան-
ձակի նահանգում, շատ դանդաղ է առաջ գնում
1887 թ. հայթայթվածը աւելի քիչ է եղել (76
պ.), քան առաջիկայ տարվանը (116 պ.): Թէպէտ
թլաքարի հանքեր մշակվում են Ռուսաստանի
զանազան կողմերում, բայց ընդհանուր գումարի,
3,553,535 պուդի մէջ Կովկասի տուածը տիրա-
պետում է, այսինքն 3,277,185 պ. է: Այս ամ-
բողջ քանակութիւնը արտահանվում է զլլաւա-
րապէս Անգլիա և ապա Հոլլանդիա, Գերմանիա,
Ֆրանսիա, Բելգիա: 1887 թ.ում թլաքարի ար-
դիւնաբերութիւնը ցոյց տուց մեծ յետադիմու-
թիւն 1886 թ. համեմատ (988,565 պակաս):
Այդ թշուառ հանգամանքը պ. Կուլիբին վերա-
դրում է Ձլլիլի թլաքարի շուկաներում առաջ
գալու: Այս վերջինը թէպէտ Կովկասի ապրան-
քից ստոր է, բայց աւելի անշուք է մրցում իր է-
ման գնով, մինչդեռ Կովկասինը (Շարուպինի),
բացի մեծ ճանապարհածախսից իր տեղից մինչև
Անգլիոյ վայրէջան հեղափոխելը (22—25 կ.),
ստիպված է վճարել բարձր տարեկ. Անգլիոյ վա-
սեան երկաթուղով մինչև Սև ծովի հասնելը:

Քարածուխի գործը Կովկասում նոյնպէս յե-
տադիմական ընթացքից դեռ չէ ազատվել: 1870
թականներում նա հասել էր այն բարձրութեան
(387,318 պուդ.) որին 1880 թականներում առաջ
անցած չէ կարողացել: Սակայն պետու-
թեան արդիւնաբերութիւնը տարուց տարի ա-
ճում է:

Ամենամեծ առաջադիմութիւն անում է ան-
շուշտ նաւթի արդիւնաբերութիւնը, որը վերջին
տաս տարվայ ընթացքում աւելի քան 10 ան-
գամ մեծացել է. 1878 թի 15 միլիոն պուդից
հասել է 1887 թին 166 միլիոն պ.: Այդ ամբողջ
նաւթից պատրաստված է 46 միլիոն պ. կէրօսին,
բէնզին 242,363 պ. և քսէոլ իւղեր 4 միլիոն
պուդ: Բոլորովին վանելով Ամերիկայի նաւթային
ապրանքները պետութեան սահմաններից, մեր
արդիւնաբերութիւնը արդէն անշուշտութեամբ մըր-
ցում է և արտասահմանի շուկաներում: Ռուսաս-
տանի նաւթը ամբողջապէս հայթայթվում է
Ապշերոնեան թերակղզու վրա և միւս տեղերը
դեռ ևս մնում են անմշակ:

Կովկասի աղի գործը թէպէտ աստիճանաբար
զարգանում է, այնու ամենայնիւ ընդհանուր պե-
տութեան արդիւնաբերութեան մէջ իր բռնած

դիրքը առանձնապէս չէ փոխում: Թէպէտ պետու-
թիւնը քարաղի հանքեր շատ չունի, սակայն բացի
Կովկասի հանքերը յայտնի են Բրեանցիվսկի (Ե-
կատերինօսլավան) և Իլեցկի (Օրենբուրգի) աղա-
հանքեր, բայց ժողովուրդը աղով մատակարարող
զլլաւոր աղբիւրները՝ լճերի աղերն են: Արանց
նշանակութիւնը բացատրվում էլիմայի և դիւբի
պայմաններով, աղը ստանալու էժան և յարմար
միջոցներով, լճերի մեծ տարածութիւններով և
հաղորդակցութեան յարմար ճանապարհներով:
Այդ տեսակ աղի զլլաւոր գործող աղբիւրներն
են Աստրախանի և Ղրիմի առաջանքները:

Պետութեան զաւարեբեան աղի արդիւնաբե-
րութեան կէսը պատկանում է 1887 թին, ինչ-
պէս և առաջիկայ տարին Կովկասին:

Կովկասում վերջին տարիներում սկսվել է
ծծմբի հայթայթելը, Կաղաւթանի կիսուտի ծնն-
դատեղից և Թիֆլիսի Աբանօ և Կատերսի ծնն-
դատեղից: 1886 թ. լուծված է ծծմբ 72,000
պ., իսկ 1887 թ. 88,000 պ.: Այս գործը կարող
է մեծ ապագայ ունենալ:

Լեռնագործարանակոն արդիւնաբերութեան
զարգացման հետ անպակաս աճում է գործա-
րաններում և հանքերում վնասուող բանւորների
թիւը: 1886 թ. պետութեան մէջ գործում էին
356,283 բանւոր, վնասվել էին 721 հոգի, որոն-
ցից մեռել են 181 հոգի: Կովկասում այդ թւից
վնասվածները 25 և մեռնողները 11 հոգի են, իսկ
1887 թ. 398,172 բանւորներից վնասվել են 916,
որոնցից մեռել են 213, Կովկասում 24 վնաս-
վողներից 11 հոգի մեռել են:

Այժմ, համեմատելով այդ երկու գրքերի ներ-
կայացրած տեղեկութիւնները, մենք հասնում ենք
այն եզրակացութեան, որ Կովկասի լեռնային
գործը դեռ շատ և շատ պտասկիւնքն ունի թէ-
թէտ, արդարեւ, շատ պտասկիւնքն կան գործի
դանդաղ առաջ գնալուն, բայց ոչ մի նոր արդիւ-
նաբերութիւն ազատ չէ դանազան արդիւններից
և յետաձգութիւններից: Հարուստ ընդերք ունե-
նալը դեռ հարստութիւն չէ: Հարկաւոր են այն-
պիսի արտակարգ պայմաններ, որոնք կարողա-
նային ի դուր մնացած դադարի էնդրիան կեր-
պարանափոխել կենդանի, գործող գործիւնան:
Մեր աչքի առջև ունենք նաւթային արդիւնաբե-
րութիւնը, որը ճիշդ առասպելական արագու-
թեամբ զարգացաւ և հասաւ Ռուսաստանի հա-
մար անսովոր աստիճանի. նա այժմ լրացնելով
պետութեան պահանջը, անցել է արտասահման,
ուր մրցում է և շատ աջողակ, Ամերիկայի վա-
րուց հաստատած գրութեան հետ: Այդ աջո-
ղութեան պտածառներն են անշուշտ. 1) այն ա-
զատ սկզբունքները, որոնք անցան նաւթային
օրէնսդրութեան մէջ, 2) Անգլիոյ վայրէջան երկա-
թուղին և 3) նաւթի ակցիւի վերջացնելը Եթէ
համեմատն պայմանները տարածվին և միւս հան-
քային հարստութիւնների վրա, հաստատ կարելի
է ասել, որ նրանք էլ կենանք կը ստանան և ի-
րանց կենդանի վանքերով դուրս մոռացնել կը
տան նաւթային տեղերը:

Գր. Տգր.

ՆԱՄԱԿ ԱՄԱՆՑՈՒՑ

Յունվարի 29-ին

Այսօր քաղաքին նորութիւնը, ընդհանուր խօ-
սակցութեան նիւթը քաղաքումս գիւղատնտեսա-
կան զարգացման հարցն է, որն աւելի և ա-
ւելի ժողովրդականութիւն է գտնում: Քաղաքի
ապագայ բարոյութեան քարեկամը, իր կամաւոր
լուծման չէ խնայում ձգել զարգացի դանձանալը,
յուսարով, որ Արաւելայի համար եթէ արտաքին,
մի փայլուն աստղ ծագելու էլ չը լինի, դեռ
երկրի խելացի և կանոնաւոր մշակութեամբ ջա-
նաւոր հասարակութիւն իր աշխատութեան
վարձը կարող է արտադրել ընտելեան հարստու-
թիւնից—հողից: Բայց կան անհասանք, որոնք
միակողմանի հայեացք ունենալով գիւղատնտեսա-

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հ Ի Ա Ի Ե Ր

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՇԻՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԳԱՆՈՎ ՄԻ ՀՄՈՒՑ ԵՒ ՓՈՐՁՎԱԾ ԲԺՇԿԻ ԿԱՐԻՔ, առաջարկում է ի գիտություն պ. պ. բժշկներին, որ հասարակությունը կը տայ բժշկին բնակարան և 1500 ռուբլի՝ այցելածներին զոյացող զուգար, իսկ եթե այս զուգարից պակաս զոյանայ, հասարակությունը խոստանում է պակասը լրացնել, առկա բժշկի օգտին թողնելով: Այցելածների վարձը պետք է ստանայ բժշկը իւրաքանչիւր անգամի համար 3 ռուբլի, իսկ հասարակության չբաւոր անդամներին կայցելէ ձրիագէտ, առանց վարձատրութիւն ստանալու: Հասարակությունը խոստանում է խնդրամատոյց լինել ուր հարկն է եկող բժշկին ծառայութեան պաշտօնի մէջ հաստատելու համար:

Կարող եմ ապահովել պ. պ. բժշկներին, որ հասարակութեան նշանակած 1500 ռուբլի զուգարից շատ աւելի արդիւնք կը ստացվի:

Ցանկացող բժշկները թող բարեհաճեն զրաւոր կերպով յայտնել ինձ իւրեանց համաձայնութիւնը հետեւեալ հասցեով. Верхние Акулисы, Старшинъ Ованесу Константиновичу. Վերին-Ագուլիսի տանուտէր Յովհաննէս Կոնստանդինեանց:

1—5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՒԱԼՅԻՍ պ. Յովհաննէս Դաւթեանցի տունն և բաղանիքն, որ գտնվում է Ալեքսանդրովսկի փողոցում՝ վաճառում է կալուածատէրը 12,000 ռուբլով, թէև 30,000 ռուբլից աւելի արժէք ունի: Տունը երկու յարկանի է՝ ձախաւին երկարութիւնը 13 1/2 սաժն է, լայնութիւնը՝ 12 սաժն, բայց այս շինութեան քարակրեայ 4 պատերն են պարաստի, որոնք հիմքից մինչև ի վեր՝ 3 սաժնից փոքր ինչ աւելի բարձրութիւնը ունին, բոլոր շինութիւն 50 պատուհանից է բաղկացած 4 կլուբի յատուկ սենեակներով և բնորոշակ գաւիթներով: Շինութիւնն երկու առանձին ճանապարհներ ունի, երկթեան մեծագործ դռներով, ունի նաև մի պողպատե գեղեցիկ պարտէզ, որը 20 տեսակ ագիւր մրգեր է բերում: Բացի սրանից՝ ունի նաև մի քարակրեայ գմբեթաձև նորաշէն բաղանիք: Թէ տունը, բաղանիքն՝ և թէ պարտէզը՝ 620 սաժն քառակուսի տարածութիւն ունի: Պարտիզի հարաւային պատերն քարակրեց են: Բաղանիքն առանձին ճանապարհով շինված է պարտիզի հարաւային կողմը, որ և բաղկանում է 3 համարներից, մի վանայով. ունի իւր համար քարակրեայ (կարիդոր) միջնագաւիթ, և մի փայտաշէն հանգստարան (բուֆէտ) երկյարկանի: Բաղանիքն 7 սաժն երկարութիւն և 5 սաժն խորութիւն ունի, գետին ունի ընդհանուր (օբսէր) բաղանիքի համար, որի քարակրեայ պատերն շինված են 3 սաժն բարձրութեամբ: Ջրի ապագայ պարաստութեան համար՝ շինված է նաև մի աւազան պաղ ջրի համար 1 1/2 սաժն բարձրութեամբ 4 սաժն երկարութեամբ և սաժն 1 1/2 լայնութեամբ: Բաղանիքի հարաւային կողմն է իւր սեփական ջուրը, որ բխում է լաշի-խեի ձորակից, շատ առողջարար և համեղ, որի մարուր հոսանքներն՝ առանձին ջրանցքով մանում են պարտէզ և պարտիզից գնալով մինչև զրան ձախաւին՝ գովացնում է բնակիչներին սրբատաշ քարերով շինված աղբիւրի միջով: Տունը, բաղանիքն և պարտէզը ունեն վաւերական հաստատուն կուպչայ. զանայ, կատարողական թերթ և պլանֆապադ (յատակագիծ):

Գնել ցանկացողներն կարող են ուղղակի դիմել վերոյիշեալ պ. Դաւթեանցին:

3—3

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԻՍԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԻՄ

ՊՕԴՈՒՆԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿԱՑԻՆԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ.

ԹԻՖԼԻՍԻՄ Կովկասեան դեղափաճառատան, և պ. պ. Շահ-պարսեանցի, Մակկերի, Սէնչի-կովսկու և Ալմուրովի դեղատներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկերի մօտ, ԲՈՒԹԱՑԻՍՈՒՄ Կօկոչեւի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՍ Բորոնցովու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ:

50—52 (Հ.)

Անհրաժեշտ եմ համարում հրապարակով յայտնել ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՆԴԻԿԱՍՊԵՆՆ ԵՐԿՐԻ ՊԱՏԻՆԻ ՎԱՅԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ, որ մեր կողմից կան գործն, որ սկսված է 1883 թվից շարունակվում է: Դարձեալ սովորականի համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով, ապրանքներ ստանալու ու ճանիչու հետեւեալ քաղաքներն. ՈՒՋՈՒՆ—ԱՌԱՅ, ՂԱՂԱՐՎԱԴ, ԱՍՄԱՐԱՍ, ՄԵՐՎ, ՉԱՐՅՈՒ, ԱՍՈՒՐԿԱՐԻՍ, ԲՈՒԹԱՐԱ և ՍՏԱՎՐՈՒՆԻ, որտեղ և ունեմ կանտորներ, նոյնպէս և ԲԱԳՈՒ: Նաև կատարում եմ ապրանքներ գնելու, ծախելու և ուղարկելու պատվերներ: Ցանկացողներն պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցեով. ՎՅՄԻՆ-ԱԴԱ—ԱԼԵԲԵՐԿԱ ՆԱՅՐՈՎ.

11—12



Ա. ՎՕԼՖՇՄԻՏ,

ՐԻԳԱ, Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ և ՀԱՄԲՈՐԳ.

գրութիւն ունի 1845 թվից:

ԱՐԱՂ—ՔԱՇԵԼՈՒ և ՕՂԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պատրաստում է մանաւորապէս. ԱՐԻԿՈՏԻՆ, ԲԵՆԵԴԻԿԵԻՆ, ՇԱՐՏԻՉ, ԿԻԻՐԱՍՕ՝ Տօլլանդտան, կակաօ, կաֆէ, ՄԱՐԱՍԿԻՆ, մրգերի ԼԻԿԵՐՆԵՐ, ԿԵԵՎԻ Նալիկաներ, մրգերի շառտոյկաներ, ՏՄԻՆԵԻ ասված արաղ, նմանապէս ՕՂԻ, ՐՕՄ, ԿՕՆԻԱԿ, ԱՐԱԿ, միակ խկական ՐԻԳԱՑԻ ԿՈՒՆՅԵՆԵԱՆ խոտի ԲԱԼՋԱՍ, ՍՊԱՐՏ, ՄԱՐԿՎԱՇՈՒ ՕՂԻ, ԹԹՄՈՐ և այլն:

Իմ պատրաստած արտասահմանեան լիկերներ իրանց յատկութեամբ՝ պակաս չեն ներմուծվածներից, բայց անհամեմատ էժան են: Նրանք արժանացան թէ համաշխարհային և թէ այլ ցուցանիշներում ամենաբարձր պարգևներ:

Օղիի գործարանի արդիւնաբերութիւնները ծախվում են բոլոր գինեկաճառանոցներում:

Պրէյսլուրանները ուղարկվում են անվարձ:

8—10 (Հ.) № 1

ОТКРЫТА ПОДПИСКА НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“.

Содержаніе газетъ: частныя объявленія и рекламы, которыя принимаются въ напечатаніи на русскомъ, французскомъ, нѣмецкомъ, армянскомъ, грузинскомъ и татарскомъ языкахъ; свѣдѣнія, имѣющія справочный характеръ, какъ-то: получаемыя въ Тифлисѣ телеграммы «Сѣвернаго агентства», биржевыя, промышленныя, торговыя и коммисіонныя справки, полицейскій, думскій и судебный бюллетени съ извѣстіями о банкротствахъ и торговой несостоятельности, некрологи, списки недоставленныхъ телеграммъ, такса на продукты, календарь, время отхода и прихода поѣздовъ закавказской желѣзной дороги и пароходовъ на Черномъ и Каспійскомъ моряхъ, а также срочныхъ экипажей во военно-грузинской дорогѣ; врачи и врачебная помощь, театры, зрѣлища, увѣдомленія о засѣданіяхъ общества, актахъ, юбилейныхъ и другихъ торжествахъ и народныхъ праздникахъ, свѣдѣнія о полученныхъ грузахъ и товарахъ и т. под.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Городскимъ подписчикамъ:

На годъ съ дост. на домъ. 1 р. 20 к.

На полгода 80 »

Иногороднымъ подписчикамъ:

На годъ съ пересылкою. 1 р. 80 к.

На полгода 1 »

Городскіе подписчики, получающіе какія-либо изданія, выходящія въ гор. Тифлисѣ, платятъ, по предъявленіи ими квитанцій на подписку въ контору газеты «Кавказскія Объявленія» и въ отдѣлѣ, лишь 60 к. въ годъ.

Для прочтенія «Кавказскія Объявленія» предлагаются публікѣ въ вагонахъ тифлисск. трамвая, въ подъѣздахъ изъ Тифлису поѣздахъ заваж. желѣзн. дор. изъ Баку и Батума и срочныхъ экипажахъ по военно-грузинской дорогѣ. За помѣщеніе объявленій взимается по 4 коп. со строки петита. Подписавшіеся же на газету «Кавказскія Объявленія», при сдачѣ объявленій не менѣе 15-ти разъ, пользуются большою скидкою по соглашенію съ конторою. Траурныя объявленія лишь на первой страницѣ; плата за каждыя разъ по 2 р.

Контора и редакция газеты «Кавказскія Объявленія» помѣщается на Гановской улицѣ, при конторѣ нотаріуса А. Г. Маминона, а отдѣленіе—на углу Головинскаго проспекта и Барятинской улицы, въ павильонѣ Хиддекеля.

Адресъ для телеграммъ: Тифлисѣ, «Кавказскія Объявленія».

3—3 Редакторъ-издательница Н. П. Слинно.

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍԵՐ

„Վ. Ա. Ր. Դ. Ա. Փ. Ո. Ի. Ն. Զ.“

ԿԱՄ

„ԵՍ ԷԼ ԻՄ ՍԱՋԸ“

Բանաստեղծութիւնների II հատոր:

Գինը մէկ ռուբլի: Գինը հեղինակին՝ Черезъ Прасковью въ гор. Св.—Креста. Семену Балаевичу Сафарянцу.

2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. RAQUET ET COM.

ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Չորեքշաբթի, փետրվարի 14-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգենաւը, նաւապետ ԺԻՐՈՒԷՆ (GIBOIN) զուրկ կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսուն և Պոլիս և Կարսէյ: Տեղեկութիւններ ժամին պէտք է դիմել ընկերութեան գործախաղերին. Բաթումում՝ տան, Նաբեքէժնայում և Թիֆլիսում նախկին Արժրու՝ զալլերէում, № 114.

2—2

ԹՂԹԻ ՊԱՀԵՍՏ

ԲԱՐՁՐԱԳՈՑԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԴԻՏԻԱՏԿՈՎՍԿՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ունի փօստի, զրբու, զրբերի, լրագիրների, ծխախոտի զոյնաւոր, կազմի և ուրի տեսակ թղթեր. ծախվում են գործարանի գնով. կան նոյնպէս և մեծ քանակութեամբ զրբու պարագաներ:

Թիֆլիս. Դիւրցովայա փողոց. Ազնեական կալուածական բանկի շինութեան մէջ:

8—20

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՕՏԵՐԸ

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՐԻՇԿ ԻՍԱՀԱԿԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, թրի ց. և սիֆիլիսի (վիրաբույժ. և ատամնացալ)
ԱՐՏԵՄԻՅԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՐՍՄԱԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էկկլորտերապիա):
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցումն են մանկաբարձուհի Երևանցեան և Արտազեան:
Վճար—50 կ. Համալսարանի (Կոմիտասի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՈՎՍԿԻ